ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ

09.09.2016 17:04

Հարգելի՛ փաստաբաններ

ՀՀ փաստաբանների պալատը Հայաստանում եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող և «ՖԵՄԻԴԱ» ՀԿ կողմից համատեղ իրականացվող EIDHR/2014/352-315 ծրագրի շրջանակներում 2016 թվականի սեպտեմբերի 29-ին, ժամը 10:00-ից 14:00-ը ՀՀ փաստաբանների պալատի մեծ դահլիճում (հասցե՝ ք. Երևան, Զաքիյան 2, ՀՀ փաստաբանների պալատ, 4-րդ հարկ) կազմակերպում է «***Վարչարարության, վարչական վարույթի և վարչական դատավարության վերաբերյալ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները***» խորագրով սեմինար-քննարկում:

Սեմինարի բանախոսներն են **ՀՀ արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, փաստաբան Էմիլ Ամիրխանյանը և իրավաբանական գիտությունների թեկնածու, փաստաբան Հունան Տեր-Վարդանյանը:**

Նշված դասընթացին մասնակցությունը յուրաքանչյուր փաստաբանի համար կհաշվարկվի 6 (վեց) ակադեմիական ժամ վերապատրաստում:

Դասընթացին կարող են մասնակցել ոչ ավել, քան 30 (երեսուն) փաստաբան: Դասընթացին գրանցվելու համար կարող եք էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել ani.gharibyan@advocates.am էլ. հասցեին՝ նշելով Ձեր արտոնագրի համարը և հեռախոսահամարը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })